ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի
աշխատակազմի ղեկավար
պարոն Տիգրան Մարտիրոսյանին

**ՏԵՂԵԿԱՆՔ**

Հարգելի՛ պարոն Մարտիրոսյան,

Տեղեկացնում եմ, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը 2017 թվականի ապրիլի 19-ին մասնակցել է Վրաստանի Հանրային պաշտպանի գրասենյակի ստեղծման 20-ամյակին նվիրված միջոցառմանը, ինչպես նաև ապրիլի 20-ին Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի Խորհրդատվական խմբի (ENNHRI Advisory Group) հանդիպմանը:

Այցի շրջանակներում նախատեսվում են նաև հանդիպումներ Թբիլիսիում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի տարածաշրջանային ներկայացուցչի, Վրաստանում Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպանի և Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի ղեկավար ներկայացուցիչների հետ:

Իբրև հարգանքի դրսևորում համապատասխան ներկայացուցիչներին հանձնելու նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը պաշտոնական այցին ընդառաջ ձեռք է բերել 61.700 (վաթսունմեկ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ արժողությամբ խորհրդանշական հուշանվերներ:

**ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի**
**ռեֆերենտ**

**Ջուլիետա Բաղդասարյան**
**20.04.2017թ.**